1894

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի ԹԷՈԴՈՍԻՈՅ ԴԷՊ Ի ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ

28 Ապրիլի — 26 Մայիսի 1884:

«Յայնժամ (ԺԴ դարուն) զօրացաք մեք (Հայքս)
» և բազմացաք, և շինեցաք զգիւղս և զգաւառս.
» իշխանք և ազնուականք, ի Ղարապազարին [1]
» սկսեալ մինչև 'ի Սուրխաթ և 'ի Ֆէօդօսիա,
» 'ի լերին և 'ի դաշտս լի արարին վանօրէիւք և
» եկեղեցեօք... շինեցաք տունս հարիւր հազար և
» զեկեղեցիս հազար. և 'ի աջէ հոնականաց պա-
» րըսպեցին 'ի քաղաքն Ֆէօդօսիա»:

ՀԻՆ ՂՐԻՄԵՑԻ ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Ա

ԻԲՐԵՒ ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Բազմաթիւ ազգային գրաւոր յիշատակարաններէ և վաւերական քարուկիր աղիւսակերտ շէնքերէ, որոց ոմանք դեռ ևս կանգունք՝ այլք կիսակործան, գիտեմք որ ԺԴ դարուն, նոյն և 'ի մօտաւոր անցելում՝ Հայոց մի մեծ գաղթականութիւն բնակած է Տաւրիդ Թերակղզւոյն մէջ: Եթէ ճանապարհորդ

1. Յիշատակարանի մէջ յիշուած անունները, այժմ ոմանք սակաւ մի այլայլած, ոմանք բոլորովին տարբեր կը հնչեն. Ղարապազարն՝ այժմեան Խարասուն է, Սուրխաթն՝ Էսկի-Ղրիմ. Ֆէօդօսիայն՝ Թէոդոսիա կամ Քէֆէ քաղաքն: